ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

26 հուլիսի 2016 թվականի **թիվ 85** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները նախապատրաստելու նպատակով կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները 2016 թվականի եւ 2017-2019 թվականների ժամանակահատվածի համար հաստատելու մասին

«Համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականություն վարելու մասին» արձանագրության 4-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 14-րդ հավելված)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները նախապատրաստելու նպատակով կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները 2016 թվականի եւ 2017-2019 թվականների ժամանակահատվածի համար:

2. Ուժը կորցրած ճանաչել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները նախապատրաստելու նպատակով կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները 2015 թվականի եւ 2016-2018 թվականների ժամանակահատվածի համար հաստատելու մասին» 2015 թվականի օգոստոսի 18-ի թիվ 97 որոշման 1-ին կետը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Կ. Մինասյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հուլիսի 26-ի
թիվ 85 որոշմամբ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման պաշտոնական կանխատեսումները նախապատրաստելու նպատակով կանխատեսումների արտաքին պարամետրերի միջակայքային քանակական արժեքները 2016 թվականի եւ 2017-2019 թվականների ժամանակահատվածի համար

	Չափման միավոր	Կանխատեսում			
		2016 թվական	2017 թվական	2018 թվական	2019 թվական
1. Համաշխարհային տնտեսության զարգացման տեմպերի կանխատեսումների միջակայքային քանակական արժեքներ (հաշվարկը՝ ըստ գնողունակության պարիտետի)	նախորդ տարվա նկատմամբ՝ տոկոսներով	3.1-3.6	3.3-3.9	3.4-3.9	3.4-3.9
2. «Brent» ապրանքանիշի նավթի գնի կանխատեսումների միջակայքային քանակական արժեքներ	ԱՄՆ դոլարով բարելի դիմաց	30.0-52.0	35.0-57.0	35.0-60.0	35.0-65.0